Արձանագրություն թիվ 4

Նիստը կայացել է դեկտեմբերի 27-ին: Նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. ՈՒսումնական հաստատության մ/խ նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին /հաղորդող՝ տնօրեն Ա. Սարգսյան/

2. Տարրական դպրոցի << Մայրենի >> առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին / զեկուցող՝ մ/մ նախագահ Ա. Եգանյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

3. 3-9-րդ դասարաններում << Անգլերեն>> առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին /զեկուցող՝ մ/մ նախագահ ՝ Վ. Խաչատրյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

4. 9-րդ դասարաններում << Հայոց պատմություն>> առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին /զեկուցող՝ մ/մ նախագահ Վ. Խաչատրյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

5. 7-9-րդ դասարաններում <<Ֆիզիկա >>,<<Քիմիա>> առարկաների դրվածքի ուսումնասիրության մասին /զեկուցող՝ մ/մ նախագահ ՝ Մ. Առաքելյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

6. 9-րդ դասարանում հայոց լեզվից մնացորդային գիտելիքների ստուգման մասին

/ զեկուցող՝ տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

7. Ներդպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում և հաջորդ փուլի նախապատրաստում: Տարածքային փուլ անցած աշակերտների անվանացանկի հաստատում /զեկուցող՝ տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս.Բեգոյան/

8. 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված ՈՒԴԱ և սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում /զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա. Կիրակոսյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

9. 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ՀՄԱ խմբի կատարած աշխատանքների մասին /զեկուցող՝ ՀՄԱ անդամներ, ուսուցչի օգնականներ/

10. ՈՒԴԱ 1-ին կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին

/ հաղորդող՝ տնօրեն Ա. Սարգսյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

11. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դպրոցի ուսումնական պլանի քննարկում և դասաբշխման հաստատում / հաղորդող՝ տնօրեն Ա. Սարգսյան/

12. Սովորողների ԿԱՊԿ գնահատման համար ՄՀԱ տարածքային կենտրոն դիմելու մասին / զեկուցող՝ տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

13. Ընթացիկ հարցեր

1. Լսեցին- ՈՒսումնական հաստատության մ/խ նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին / հաղորդող՝ տնօրեն Ա. Սարգսյան/

Որոշում է

Հաստատել մանկավարժական խորհրդի դեկտեմբերի 27-ին տեղի ունեցող օրակարգը:

2. Լսեցին- Տարրական դպրոցի << Մայրենի >>առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին / զեկուցող՝ մ/մ նախագահ Ա. Եգանյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

Ա. Եգանյանը նշեց, որ 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում ուսումնասիրվել է << Մայրենի >> առարկայի դասավանդման վիճակը: Դասավանդման ընթացքում ուսուցիչները կիրառել են տարբեր մեթոդներ, որոնց շնորհիվ դասերը դարձել են ավելի հետաքրքիր: Ա. Եգանյանը նշեց, որ<< Մայրենի>> առարկան կարևոր նշանակություն ունի աշակերտների հայեցի դաստիարակության, քերականական գիտելիքների խորացման կարդալու և գրելու տեխնիկայի զարգացման համար: Մայրենին լավ տիրապետելու համար կազմակերպվել են ընթերցանություններ, զրույց-քննարկումներ: 2-4- րդ դասարաններում կազմակերպվել են բարձրաձայն ընթերցանության ստուգում օգտվելով ընթերցանության գնահատման սանդղակից , որի արդյունքում էլ կազմվել է ընթերցանության գործընթացում դժվարացող աշակերտների ցանկը.

2-րդ դասարան

1. Հակոբյան Միլենա

2. Հակոբյան Էլեն

3-րդ դասարան

1. Հարությունյան Դավիթ

2. Մելիքսեթյան Մերի

4-րդ դասարան

1. Մաթևոսյան Նարեկ

2. Հակոբյան Արման

3. Խաչատրյան Սենիկ

Ա. Եգանյանը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Նա նշեց, որ 4-րդ դասարանում անցկացվել է<<Մայրենի>> առարկայից գրավոր աշխատանք տնօրենության կողմից , որի արդյունքներն են՝

Որակ- 88%

Առաջադիմություն-88.8% :

Ա. Եգանյանը հավելեց, որ տարրական դասարաններում << Մայրենի>> առարկայի դասավանդման վիճակը համապատասխանում է առարկայի չափորոշիչներին:

Արտահայտվեցին - Ս. Բեգոյանը նշեց, որ իրականացրել է դասալսումներ 1-4-րդ դասարաններում և ընդհանուր առմամբ աշակերտները տառաճանաչ են, սակայն կան սովորողներ, որոնք դժվարանում են կարդալ: Նրանց հետ լրացուցիչ աշխատանքներ են իրականացվում: Դպորցը կատարում է իր գործը, սակայն հետևողական չեն ծնողները: ՈՒսումնասիրության ընթացքում <<Մայրենի >> առարկայի վիճակը առաջարկում է գնահատել <<Լավ>>:

Հիմք ընդունելով Ա. Եգանյանի և Ս. Բեգոյանի զեկույցները մանկավարժական խորհուրդը

Որոշում է

<< Մայրենի >> առարկայի վիճակը դպրոցում գնահատել՝ լավ:

3.Լսեցին- 3-9-րդ դասարաններում << Անգլերեն>> առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին /զեկուցող՝ մ/մ նախագահ Վ. Խաչատրյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

Վ. Խաչատրյանը նշեց, որ ծանրաբեռնված աշխատանքների պատճառով նպատակահարմար են գտել << Անգլերեն>> առարկայի դասավանդման վիճակի ուսումնասիրությունը 3-9-րդ դասարաններում կատարել 2-րդ կիսամյակում:

Արտահայտվեցին -Ս. Բեգոյանը նշեց, որ ծանրաբեռնված աշխատանքների և ժամանակի սղության հետևանքով որոշվել է <<Անգլերեն>> առարկայի ուսումնասիրությունը և դրա դասավանդման վիճակը 3-9-րդ դասարաններում իրականացնել 2-րդ կիսամյակում:

Հիմք ընդունելով Վ. Խաչատրյանի և Ս. Բեգոյանի հաղորդումները մանկավարժական խորհուրդը

Որոշում է

<<Անգլերեն >> առարկայի ուսումնասիրությունը տեղափոխել 2-րդ կիսամյակ:

4. Լսեցին- 9-րդ դասարաններում << Հայոց պատմություն>> առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին /զեկուցող՝ մ/մ նախագահ Վ. Խաչատրյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

Վ. Խաչատրյանը հաղորդեց, որ << Հայոց պատմություն >> առարկայի ուսումնասիրությունն 6-9-րդ դասարաններում իրականացվել է և ուսուցչուհուն որպես սկսնակ մանկավարժի ցուցաբերվել է մեթոդական օգնություն, տրամադրվել են մեթոդական նյութեր, տրվել լրացուցիչ ցուցումներ: Վ. Խաչատրյանը հավելեց, որ աշխատանքները կրում են շարունակական բնույթ և 2-րդ կիսամյակում նույնպես կիրագործվեն ուսումնասիրություններ, որի ընթացքում ևս կտրամադրվեն լրացուցիչ մեթոդական աջակցություն:

Արտահայտվեցին - Ս. Բեգոյանը նշեց, որ Ն. Հովհաննիսյանին, որպես սկսնակ ուսուցչի տրամադրվել է մեթոդական օգնություն, տրվել են ցուցումներ օրվա պլանի, դասը վարման մեթոդների վերաբերյալ: Իր կողմից իրականացվել են դասալսումներ:

Հիմք ընդունելով Վ. Խաչատրյանի և Ս. Բեգոյանի հաղորդումները՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

Շարունակել մեթոդական օգնություն ցուցաբերել սկսնակ ուսուցիչներին, հետևողական լինել և իրականացնել դասալսումներ նրանց մոտ:

5. Լսեցին-7-9-րդ դասարաններում <<Ֆիզիկա >>, <<Քիմիա>> առարկաների դրվածքի ուսումնասիրության մասին /զեկուցող՝ մ/մ նախագահ ՝ Մ. Առաքելյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

Մ. Առաքելյանը զեկուցեց, որ իրականացվել է միայն << Քիմիա>> առարկայի դասավանդման վիճակի ուսումնասիրումը՝ ըստ չափորոշչային պահանջների, որի ավարտին տրվել է ստուգիչ ամփոփիչ գրավոր աշխատանք տնօրենության կողմից, որի արդյունքներն են՝ որակ -44%, առաջադիմություն-100%: Մ. Առաքելյանը հավելեց, որ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով << Ֆիզիկա>> առարկայի դասավանդման ուսումնասիրությունը՝ ըստ չափորոշչային պահանջների տեղափոխվել է 2-րդ կիսաամյակ:

Արտահայտվեցին - Ս. Բեգոյանը ներկայացրեց, որ պարբերաբար կատարել է դասալսումներ տվյալ առարկայի դասավանդման վիճակը ուսումնասիրելու

նպատակով, նաև աշխատանքներ են տարվում արդյունքների բարելավելու նպատակով: Ս. Բեգոյանը հաստատեց Մ. Առաքելյանի խոսքն ու հավելեց, որ << Ֆիզիկա >> առարկայի դասավանդման ուսումնասիրումը ըստ առարկայի չափորոշիչների կտեղափոխվի 2-րդ կիսամյակ , քանի որ ծանրաբեռնվածության պատճառով հնարավոր չէր կատարել այն 1-ին կիսամյակում:

Հիմք ընդունելով Մ. Առաքելյանի և Ս. Բեգոյանի զեկույցը մանկավարժական խորհուրդը

Որոշում է

Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման կատարած աշխատանքները համարել §լավ!:

6. Լսեցին-9-րդ դասարանում հայոց լեզվից մնացորդային գիտելիքների ստուգման մասին / մ/մ նախագահ՝ Վ. Խաչատրյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

Զեկուցող՝ Վ. Խաչատրյանը ներկայացրեց, որ տնօրենության կողմից անցկացված 9-րդ դասարանում << Հայոց լեզու>> առարկայից մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքները գոհացուցիչ չեն, սակայն աշխատանքներ են տարվում հետագայում արդյունքների բարելավման նպատակով: Նա ներկայացրեց գրավոր աշխատանքի արդյունքները՝ որակ-40%, առաջադիմություն-100%:

Արտահայտվեցին- Ս. Բեգոյանը նշեց, որ 9-րդ դասարանում պարբերաբար իրականացրել է դասալսումներ, որոնց արդյունքները գոհացուցիչ չեն, բայց տարվելու են աշխատանքներ, որպեսզի բարելավվեն << Հայոց լեզվի >> գրավոր աշխատանքների մակարդակը:

Որոշեցին

Անհատական աշխատանքներ տանեն չառաջադիմող աշակերտների հետ:

7. Լսեցին- Ներդպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում և հաջորդ փուլի նախապատրաստում: Տարածքային փուլ անցած աշակերտների անվանացանկի հաստատում / զեկուցող՝ տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս .Բեգոյան/

Ս. Բեգոյանը ներկայացրեց 2022 թվականի նոյեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 5-ը անցկացված ներդպրոցական օլիմպիադաների առարկաների և մասնակցած աշակերտների ցուցակները:Նա նշեց, որ նոյեմբերի 14-ին անցկացվել է <<Հայոց լեզու>> առարկայից օլիմպիադան, որին մասնակցել են 6 աշակերտ, որոնցից երեքը անցել են տարածքային փուլ՝

1. Միրզաբեկյան Անդրեյ

2. Խուդաթյան Ազնիվ

3. Սիմոնյան Արեն

Ուսուցիչ՝ Թ. Առաքելյան

Նոյեմբերի 24-ին անցկացվել է <<Գրականություն >> առարկայից ներդպրոցական օլիմպիադան, որին մասնակցել են յոթ աշակերտ, որից երկուսը ստացել են իրավունք մասնակցելու տարածքային փուլին՝

1. Սիմոնյան Արեն

2. Ղազարյան Սեդա

ՈՒսուցիչ՝ Թ. Առաքելյան

Նոյեմբերի 15-ին կազմակերպվել և անցկացվել է <<Ռուսաց լեզու>> առարկայի ներդպրոցական օլիմպիադան, որին մասնակցել է ութ աշակերտ և տարածքային փուլի մասնակցության իրավունք է ստացել երեք աշակերտ՝

1. Խուդաթյան Ազնիվ

2. Սիմոնյան Արեն

3. Միրզաբեկյան Անդրեյ

ՈՒսուցիչ՝ Ա. Սարգսյան

Նոյեմբերի 16-ին կազմակերպվել և անցկացվել է << Անգլերեն >>առարկայի ներդպրոցական օլիմպիադան օլիմպիադան, որին մասնակցել է յոթ աշակերտ և տարածքային փուլին մասնակցության իրավունք է ստացել երկու աշակերտ

1. Սեյրանյան Անահիտ

2. Խուդաթյան Ազնիվ

ՈՒսուցիչ՝ Ա. Կիրակոսյան

Նոյեմբերի 17-ին կազմակերպվել և անցկացվել է<< Պատմություն>> առարկայի օլիմպիադան, որին մասնակցել է հինգ աշակերտ և տարածքային փուլին մասնակցության իրավունք է ստացել մեկ աշակերտ

1. Սիմոնյան Արեն

ՈՒսուցիչ՝ Ն. Հովհաննիսյան

Նոյեմբերի 18-ին կազմակերպվել և անցկացվել է << ՀԵՊ>> առարկայից ներդպրոցական օլիմպիադան, որին մասնակցել է հինգ աշակերտ, սակայն տարածքային փուլին մասնակցելու իրավունք ստացել է մեկ աշակերտ՝

1. Մեյրանյան Անահիտ

ՈՒսուցիչ՝ Ա. Խաչատրյան

Նոյեմբերի 22-ին կազմակերպվել և անցկացվել է <<ՆԶՊ>> առարկայի օլիմպիադան: Մասնակցել են չորս աշակերտ, սակայն տարածքային փուլին մասնկցելու իրավունք է ստացել մեկ աշակերտ՝

1. Միրզաբեկյան Անդրեյ

ՈՒսուցիչ՝ Վ. Սարիբեկյան

Ս. Բեգոյանը ներկայացրեց նաև, որ նոյեմբերի 21-ից դեկտեմբերի 2-ը անց են կացվել առցանց օլիմպիադաներ՝

<<Մաթեմատիկա >>՝ 16 աշակերտ,

<<Ֆիզիկա>>՝ 2 աշակերտ,

<< Կենսաբանություն>>՝ 3 աշակերտ,

<<Աշխարհագրություն>>՝ 3 աշակերտ: Բոլոր աշխատանքները ժամանակին ուղարկվել են համակարգող դպրոց: Բոլոր օլիմպիադաների համար ստեղծվել են հանձնաժողովներ, իսկ օլիմպիադաներն անց են կացվել համաձայն կարգի:

Արտահայտվեց- Տնօրեն՝ Ա. Սարգսյանը գոհունակություն հայտնեց այն բանի համար, որ այս տարի աշակերտների թիվը հուսադրող է նախկին տարիների համեմատ, որոնք մասնակցել են օլիմպիադաների տարբեր առարկաներից, սակայն հորդորեց, որ այսուհետ ներգրավվեն էլ ավելի շատ աշակերտներ, որոնք նաև բարձր ցուցանիշներ կունենան տարածքային փուլերին մասնակցության ժամանակ:

Հիմք ընդունելով Ս. Բեգոյանի զեկույցը, տնօրեն՝ Ա. Սարգսյանի կարծիքը մանկավարժական խորհուրդը

Որոշում է

Հաջորդ ուսումնական տարիներին էլ ավելի աշակերտ ներգրավվեն առարկայական օլիմպիադաներում

8. Լսեցին-2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված ՈՒԴԱ և սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում

/զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա. Կիրակոսյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

Ս.Բեգոյանը, ամփոփելով դասվար, դասղեկների ներկայացրած տեղեկությունները աշակերտների առաջադիմության մասին. ներկայացրեց 2022-2023 ուստարվա սկզբին սովորողների թիվը՝ 189 աշակերտ, որից 83 աղջիկ, 106 տղա: Նա ներկայացրեց, որ կիսամյակի սկզբում դպրոց է ընդունվել 16 աշակերտ և կիսամյակի ընթացքում այլ կրթական օջախներ են տեղափոխվել 15 աշակերտ: Այսպիսով 1-ին կիսամյակի վերջում աշակերտների թիվը կազմում է՝ 190, որից 84 աղջիկ, 106 տղա: Գերազանց առաջադիմություն են ցուցաբերել ՝ 19 աշակերտ, որից աղջիկ 15,տղա4: Հարվածային ՝ 43 աշակերտ, որից աղջիկ՝ 24, տղա՝ 22:

ՈՒսման մեջ հետ են մնում հետևյալ 10 աշակերտները՝

9-րդ դասարան

1.Հարությունյան Էդգար – հանրահաշիվ, երկրաչափություն ՝ ուսուցիչ Մ. Առաքելյան

ՀԵՊ՝ ուսուցիչ Ա. Խաչատրյան

Ղարիբյան Ալեքս -հանրահաշիվ, երկրաչափություն ՝ ուսուցիչ՝ Մ. Առաքելյան, ՀԵՊ- ուսուցիչ՝ Ա. Խաչատրյան

8-րդ դասարան

Սողոյան Միքայել- հանրահաշիվ, ուսուցիչ՝ Մ.Առաքելյան

7-րդ դասարան

Հայրապետյան Ռուբեն, ռուսաց լեզու, ուսուցիչ ՝ Ա. Ջումայան

Տոնոյան Դավիթ-ռուսաց լեզու, ուսուցիչ՝ Ա. Ջումայան

6-րդ դսասարան

Ղարիբյան Ալեն- անգլերեն, Ա. Կիրակոսյան

Նազարեթյան Ռաֆայել– անգլերեն, ուսուցիչ Ա.Կիրակոսյան, ռուսաց լեզու, ուսուցիչ՝ Ա.Ջումայան

Սարգսյան Էրիկ-անգլերեն, ուսուցիչ՝ Ա.Կիրակոսյան, ռուսաց լեզու ուսուցիչ՝ Ա. Ջումայան, մայրենի ուսուցիչ՝ Վ. Խաչատրյան

5-րդ դսասարան

Հարությունյան Թաթուլ-ռուսաց լեզու, ուսուցիչ՝ Ա.Ջումայան

3-րդ դասարան

Առաքելյան Մարգարիտա –ռուսաց լեզու, ուսուցիչ՝ Ա. Ջումայան

Ս. Բեգոյանը ներկայացրեց, որ դպրոցում ուսման որակը կազմում է՝ 33%, առաջադիմությունը՝ 95%, իսկ բացակայությունների թիվը կազմում է 4909ժամ:

Արտահայտվեց- տնօրեն Ա. Սարգսյանը, նա մտահոգություն հայտնեց, հորդորելով տվյալ աշակերտներին դասավանդող ուսուցիչներին տանել լրացուցիչ աշխատանքներ, որպեսզի 2-րդ կիսամյակում տվյալ աշակերտների մոտ նկատվի առաջխաղացում՝ գիտելիքների ձեռքբերման առումով:

Հիմք ընդունելով Ս. Բեգոյանի հաղորդումը մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1-ին կիսամյակի արդյունքները համարել բավարար և հաջորդ կիսամյակում աշխատել ավելի արդյունավետ:

9. 2022-2023 ուսոռումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ՀՄԱ խմբի կատարած աշխատանքների մասին /զեկուցող՝ ՀՄԱ անդամներ, ուսուցչի օգնականներ/

9-Լսեցին- Հատուկ մանկավարժ Գ. Գրիգորյանին, նա ներկայացրեց 2022-2023 ուստարվա կիսամյակում իր կատարած աշխատանքները: Իրագործել է ՀՄԱ թիմի և դասվար,դասղեկների հետ սովորողների դպրոցական մակարդակի առաջին աստիճանի գնահատում կիրառելով երեխայի գործունեության գնահատման գործիքներ: Տարվել են աշխատանքներ ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան : Իրագործել թեստային աշխատանքներ տարբեր դասարաններում , որոնք ուղղված են եղել սովորողի ինքնքճանաչմանը և աշխարհընկալմանը: Գ. Գրիգորյանը հավելեց, որ մասնակցել է ԲՄԹ –ի կլոր սեղանների ՏՄԱԿ-ի կողմից կազմակերպված սեմինարների:

Լսեցին- ուսուցչի օգնական՝ Ռ. Ներսիսյանին, նա նշեց, որ ուսումնական տարվա սկզբից դասավանդող ուսուցիչների հետ բացահայտել փորձելով գտնել խթանող միջոցներ, որոնք կբարելավեն նրանց ուսումնական գործընթացը ցուցաբերած արդյունքները: Համագործակցել է ծնողների հետ ապահովելով դպրոց-ծնող-երեխա կապը:Մասնակցել է ԱՈՒՊ –ների լրացման գործընթացին դպրոցական և տարածքային մակարդակների գնահատումներին: Մասնակցել է տարբեր սեմինարներ-քննարկումների: Կամավոր հիմունքներով մասնակցել է ուսուցողական վերապատրաստումների և հավաստագրվել:

Լսեցին- ուսուցչի օգնական՝ Ժաննա Ազարյանին , նա ներկայացրեց իր կատարած աշխատանքը նշելով, որ մինչև սեպտեմբերի 15-ը իրագործել է դիտարկում 1-4-րդ

դասարաններում առավել ուշադրություն դարձնելովԿԱՊԿ ունեցող սովորողներին: Որի ընթացքում դիտարկման մոթոդով դուրս է բերել տվյալ աշակերտների կարողությունների, կարիքների և դժվարությունների, հասակակիցների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ, որն էլ քննարկվել է ՀՄԱ անդամների և ուսուցիչների հետ: Ամուր հիմքերի վրա է դրվել ծնող-ուսուցիչ-դպրոց կապը: Ժ. Ազարյանը նշեց, որ մասնակցել է ԱՈՒՊ-ների կազզման գործընթացին և ՏՄԱԿ-ի կողմից կազմակերպաած սեմինար-քննարումներին:

Լսեցին – հոգեբան՝ Ա. Սարգսյանին, նա ներկայացրեց 1-ին կիսամյակում իր կատարած աշխատանքների բովանդակությունը, ներկայացնելով, որ կատարել է ուսումնասիրություններ, բազմաբնույթ դիտարկումներ ԿԱՊԿ ունեցող սովորողների և բնականոն զարգացում ունեցող աշակերտների հարմարման վերաբերյալ, որոնց շուրջ էլ կազմվել են հոգեբանական աշխատանքների պլանները: Տարբեր դասարաններում իրականացրել է հոգեբանական աջակցություններ՝ խաղի, նկարչության միջոցով: Մասնակցել է ԲՄԹ-ի հետ առաջնային գնահատմանը, համագործակցել <<Զատիկ>> խնամքի կենտրոնի աշխատակիցների հետ բացահայտել համտեղ ունեցած սաների ուժեղ և թույլ կողմերը: Մասնակցել է կլոր սեղանների քննարկումներին:

Արտահայտվեց- ՈՒԱԳ տեղակալ՝ Ս. Բեգոյանը, նա նշեց, որ ուսումնական տարվա սկզբից ՄՆԹ-ն իր գործունեությունը կազմակերպել է ըստ չափորոշչային պահանջների և մինչ րս կատարում են այդ աշխատանքները բարձր մակարդակով: Նա նշեց, որ առաջնային գնահատման ընթացքում վեր են հանվում անգամ աննշան խնդիրներն ու արագ լուծվում ի շահ սովորողի, ՀՄԱ –ն իր աշխատանքները կատարում է կանոնակարգված : Ս. Բեգոյանը առաջարկեց ՀՄԱ թիմի աշխատանքը գնահատել՝ <<Լավ>>:

Հիմք ընդունելով ՀՄԱ թիմի հաշվետվությունը ըստ կատարած աշխատանքի մանկավարժական խորհուրդը

Որոշում է

ՀՄԱ թիմի աշխատանքը գնահատել՝ << Լավ>>:

10. ՈՒԴԱ 1-ին կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին /զեկուղժցող՝ տնօրեն Ա. Սարգսյան, տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

Լսեցին- ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյանին , նա ներկայացրեց 1-ին կիսամյակում մեթոդմիավորումների կատարած աշխատանքները ըստ ժամանակացույցի: Նա նշեց, որ բոլոր մեթոդմիավորումները կատարել են նախատեսված աշխատանքներից գրեթե բոլորը, սակայն կան աշխատանքներ, որոնք տեղափոխվել են երկրորդ կիսամյակ: Իրականացվել են փոխադարձ դասալսումներ : Էլեկտրոնային մատյանները լրացվել են ժամանակին և գնահատականները համապատասխանում

են պահանջված քանակին: Ամեն օր ստուգվել են աշակերտների հաճախումները, դասասենյակների մաքրությունը:

Նոյեմբերի 14-30-ը տնօրենության կողմից կազմակերպվել է մայրենի դրվածքի ուսումնասիրություն 4-րդ դասարանում, իրականացվել են դասալսումներ և եզրափակվել է թեստային ստուգողական աշխատանքներով: Արդյունքները ամփոփվել է մ/մ նիստին: Նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 9-ը պետք է ուսումնասիրվեր << Անգլերեն >> առարկայի դրվածքը, սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից ելնելով, այն տեղափոխվել է 2-րդ կիսամյակ: Հոկտեմբերի 9-րդ դասարանում ստուգվեցին աշակերտների մնացորդային գիտելիքները՝ <<Հանրահաշիվ>> և <<Երկրաչափություն >>առարկաներից, որոնց արդյունքներն են՝

Հանրահաշիվ-որակ՝ 7.5%, առաջադիմություն՝ 78%
Երկրաչափություն-որակ՝ 15%, առաջադիմություն 81.5%: Նոյեմբերին 9-րդ դասարանում ստուգվեցին աշակերտների մնացորդային գիտելիքները << Հայոց լեզու >> և << Գրականություն>> առարկաներից, որոնց արդյունքները հետևյալն են՝ որակ՝ 40%, առաջադիմություն՝ 100%: Դեկտեմբերին 9-րդ դասարանում ստուգվել է <<Քիմիա >> առարկայի մնացորդային գիտելիքները, որի արդյունքներն հետևյալն են որակ՝ 44%, առաջադիմություն՝ 100%: Հոկտեմբերին << Ֆիզկուլտուրա>>առարկայից կազմակերպվել են և անկացվել ներդպրոցական մրցաշարՀ8-9-րդ դասարանիների մասնակցությամբ: Ս. Բեգոյանը ներկայացրեց նաև 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների ընդհանուր արդյունքների միջինը.

Մայրենի-60%

Մաթեմատիկա-59%

Ես և շրջակա աշխարհը-67%

Տեխնոլոգիա-88%

Շախմատ-70%

Հայոց լեզու- 37%

Գրականություն-44%

Մայրենի -27%

Ռուսաց լեզու-58%

Մաթեմատիկա -31%

Հանրահաշիվ-29%

Երկրաչափություն-26%

Ինֆորմատիկա-45%

Տեխնոլոգիա-97%

Կերպարվեստ-81%

Անգլերեն-45%

Ֆիզիկա-50%

Քիմիա-37%

Կենսաբանություն-39%

Բնագիտություն-59%

Աշխարհագրություն-44%

Հայոց պատմություն-47%

Հայրենագիտություն-67%

ՀԵՊ -54%

Հասարակագիտություն-58%

Ֆիզկուլտուրա-96%

ՆԶՊ-60%

Ազգային երգ ու պար-70%

Ս. Բեգոյանը հավելեց, որ արդեն ներկայացվել են այն աշխատանքները, որոնք պետք է իրագործվեն 2-րդ կիսամյակում: Նա նշեց նաև, որ աշխատանքի բնույթը չի փոխվել և ինչպես, որ նախատեսել էին ուսումնական տարվա սկզբին կունենա շարունակական բնույթ:

11. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դպրոցի ուսումնական պլանի քննարկում և դասաբշխման հաստատում/ զեկուցող՝ տնօրեն Ա. Սարգսյան/

Լսեցին-տնօրեն Ա. Սարգսյանին, նա ներկայացրեց, որ կազմվել են 2-րդ կիսամյակի դասաբաշխումը, կազմվել է ուսպլանը,որից հետո էլ կազմվել է դասացուցակը: 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի դասաբաշխման մեջ տեղի են ունեցել փոփոխություններ՝<< Հումանիտար>>մ/մ՝

<<Հայոց պատմություն>> առարկայի 6-7 դասարանների 1-ին կիսամյակի երկուական ժամերը 2-րդ կիսամյակում փոխարինել մեկական ժամով:

Տնօրեն Ա. Սարգսյանը հավելեց, որ ինչպես առաջին կիսամյակում, այնպես էլ երկրորդ կիսամյակում կպահպանվի հնգօրյա աշխատանքային ռեժիմը:

12. Սովորողների ԿԱՊԿ գնահատման համար ՄՀԱ տարածքային կենտրոն դիմելու մասին / զեկուցող՝ տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյան/

Լսեցին- տնօրենի ՈՒԱԳ տեղակալ Ս. Բեգոյանին, նա ներկայացրեց, որ սեպտեմբեր նոյեմբեր ամիսներին են դիմել դասվարներ Ս.Բեգոյանը, Ռ.Մարկոսյանը և Ա. Եգանյանը, որպեսզի իրականացվի դպրոցական առաջին մակարդակի գնահատում հետևյալ աշակերտներին՝

1-ին դասարան –Նաիրա Այվազյան, դասվար՝ Ս. Բեգոյան.

2-րդ դասարան-Ռոբերտ Սարիբեկյան, դասվար՝ Ա. Եգանյան.

4-րդ դասարան-Գոռ Հովհաննիսյան. դասվար՝ Ռ. Մարկոսյան

Ներկայացնել ՏՄԱԿ երկրորդ մակարդակի գնահատման՝ հուզակամային, վարքային խնդիրներով: Առաջնային գնահատումից պարզ է դարձել, որ Նաիրա Այվազյանը ունի՝ ձայնի, խոսքի, մտավոր ֆունկցիայի միջին խանգարում: Ս. Բեգոյանը առաջարկեց մանկավարժական խորհդին իր որոշմամբ վերոնշյալ աշակերտներին ներկայացնել ՏՄԱԿ երկրորդ մակարդակի գնահատման: Հիմք ընդունելով դասվարների դիմումը մանկավարժական խորհուրդը

Որոշում է

Վերը նշված աշակերտներին ներկայացնել ՏՄԱԿ երկրորդ մակարդակի գնահատման:

Նիստը վարում էր տնօրեն՝ / Ա. Սարգսյան /

Քարտուղար՝ / Ռ. Մարկոսյան /